ՓԱՍՏԱԲԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԳՐԱՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

24.01.2014 14:03

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարանի

նախագահ՝ պարոն Ռ.Վարդազարյանին

Հարգելի պարոն Վարդազարյան,

Փաստաբան Գիվի Հովհաննիսյանը 24.01.2014թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատին, տեղեկացնելով, որ ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2013թ. թիվ ԵԿԴ/0070/08/13 որոշմամբ որոշվել է ՀՀ ոստիկանության Երևանի քաղաքի քննչական վարչության ԾՀՔ բաժնի պետի տեղակալ Ա.Բայադյանի միջնորդությունը բավարարել՝ **թիվ 59102509 քրեական գործով թույլատրել քննիչին համապատասխան ինտերնետ կայքի ադմինիստրացիայից ստանալ 01.01.2009թ. մինչև 01.01.2011թ. ընկած ժամանակահատվածում "noon77@mail.ru" և "karen@ilg.am" կայքերի էլեկտրոնային փոստերի արկղերի պարունակության վերաբերյալ տեղեկություններ**:

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ երրորդ վարչության պետը 22.01.2014թ. դիմել է "Ինվեսթմնթ Լո Գրուպ" ՍՊԸ տնօրեն Արտաշես Կակոյանին խնդրելով տրամադրել "karen@ilg.am" էլեկտրոնային փոստային արկղում պահպանված էլեկտրոնային նամակագրությունը:

Փաստաբան Գիվի Հովհաննիսյանը հայտնել է, որ "noon77@mail.ru" և "karen@ilg.am" էլեկտրոնային փոստերը պատկանում են փաստաբան Կարեն Պետրոսյանին:

Գտնում ենք, որ նշված էլեկտրոնային փոստի մասին տեղեկությունները չեն կարող տրամադրվել ՀՀ ոստիկանությանը, հետևյալ պատճառաբանությամբ.

Կարեն Պետրոսյանը հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր 854):

"Ինվեսթմնթ Լո Գրուպ" ՍՊ ընկերությունը հանդիսանում է փաստաբանական ծառայություններ մատուցող կազմակերպություն, իսկ փաստաբան Կարեն Պետրոսյանը հանդիսանում է այդ կազմակերպության աշխատակիցը (ըստ պալատի տեղեկությունների)։

Այս պայմաններում, ՀՀ ոստիկանությունը հավակնում է ստանալ փաստաբանի էլեկտրոնային փոստում գտնվող տեղեկություններ։

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել**:

Վերոգրյալից ելնելով ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է, որ փաստաբան Կարեն Պետրոսյանի էլեկտրոնային փոստի տեղեկություններն անձեռնմխելի են։

Դատարանն օբյեկտիվորեն կարող էր չիմանալ, որ պահանջվում է փաստաբանի էլեկտրոնային փոստից տեղեկություններ, քանի որ նախաքննության մարմինը չի հայտնել դատարանին այդ մասին։

"Փաստաբանության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խնդիրներից է **պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում**:

Վերոգրյալի հիման վրա Ձեզ է հասցեագրվում փաստաբան Գիվի Հովհաննիսյանի դիմումն ի տնօրինություն։

Միաժամանակ, նկատի ունենալով ՀՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջն առ այն, որ **ընդհանուր իրավասության դատարանի նախագահը ապահովում է դատարանի բնականոն գործունեությունը**, խնդրում եմ քննարկում կազմակերպել՝

նախաքննության մարմնի կողմից հետագայում փաստաբանների մասին տեղեկություններ պահանջելու հնարավորությունը բացառելու հարցով։

Առդիր՝ դիմումի և կից նյութերի պատճենները։

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

նախագահ՝
Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })